Նախագիծ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

<<2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով>> ստեղծված Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին

ՀՀ Ազգային Ժողովը որոշեց «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել 6 ամսով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովը տարբեր գերատեսչություններից պահանջել և ստացել է բազմաքանակ փաստաթղթեր, որոնց մանրամասն ուսումնասիրման համար պահանջվել է 6 ամիս: Հանձնաժողովի աշխատանքների հաջորդ փուլը իրականացնելու, փաստաղթերի ուսումնասիրման աշխատանքները ավարտին հասցնելու համար խիստ անհրաժեշտ է հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարացնել առնվազն 6 ամսով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը աշխատանքների հաջորդ փուլը իրականացնելու, փաստաթղթերի ուսումնասիրման աշխատանքները ավարտին հասցնելու նպատակով, սույն թվականի հուլիսի 7-ի փակ նիստում որոշեց՝ առաջարկել Ազգային Ժողովին «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի աշխատանքները երկարաձգել ևս վեց ամսով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

7 հուլիսի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն ՍԻՄՈՆՅԱՆ,

2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովը 07.07.2022թ. տեղի ունեցած փակ նիստում որոշել է «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգել 6 ամսով:

Կից ներկայացվում է Ազգային Ժողովի որոշման համապատասխան նախագիծը:

Խնդրում եմ հարցի քննարկումը «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի համաձայն ընդգրկել Ազգային Ժողովի հերթական նիստերի օրակարգում:
Ազգային Ժողովի նիստում հարցի քննարկման ժամանակ որոշման նախագիծը կներկայացնի <<2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով>> ստեղծված քննիչ հանձնաժողովի նախագահը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ***ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ***